

Համարը N 805-Լ	Տեսակը <
Տիպը Լուկա որոշում	Կարգավիճակը Գ
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2019.06.26/41(1494).1	Ընդունման վայրը Ե
Հոդ.535.6	
Ընդունող մարմինը ՀՀ վարչապետ	Ընդունման ամսաթիվը 2
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 2
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 27.06.2019	Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2019 թվականի N 805-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի N 1483-Ն որոշման հավելվածի 12-րդ և 13-րդ կետերով՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հինգերորդ զեկույցը՝ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մինչև 2019 թվականի հունիսի 28-ը ապահովել Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի Հայաստանի Հանրապետության չորրորդ զեկույցի օտար լեզվով (անգլերեն) թարգմանությունը և տրամադրումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի  
Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. հունիսի 20  
Երևան

Հավելված  
ՀՀ վարչապետի 2019 թ.  
հունիսի 20-ի N 805-Լ  
որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՁԵԿՈՒՅՑԸ ՏԱՐԱԾՍԵՐՉԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ 15-Դ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ**

Երևան 2019

**Բովանդակություն**

	Ներածություն
Մաս 1	Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման 3-րդ մոնիթորինգային փուլի արդյունքներն ամփոփող ազգային մակարդակով իրականացված գործնական քայլերը Իրավիճակի վերլուծություն
Մաս 2	Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ներկայացրած 4-րդ զեկույցից հետո ձեռնարկված միջոցները և իրականացված ծրագրերը: Ձեռնարկված քայլերը՝ ըստ հողվածների
Աղյուսակներ	
1-1, 1-2, 1-3, 1-4	Մշակութային ոլորտ
2-1, 2-2	Վիճակագրությունը
3, 4-1, 4- 2, 4-3, 5	Կրթության ոլորտ
6	Լրատվամիջոցները
7-1, 7-2	Տնտեսական և հասարակական ոլորտները

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանն իր հինգերորդ պարբերական զեկույցը ներկայացրել է 2019 թվականի մայիսին:
2. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է խարտիայի սկզբունքների կատարման և խարտիայի դրույթների իրականացմանն ուղղված միջոցառումների ընթացքի, Հայաստանում Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ փորձագետների կոմիտեի դիտարկումների երրորդ փուլի արդյունքների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականի շրջանակներում ազգային մակարդակով իրականացված գործնական քայլերի վերաբերյալ չորրորդ զեկույցը:
3. Ձեկույցը կազմել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը: Ձեկույցը բաղկացած է ներածությունից, 2 մասից և 7 աղյուսակներից: Հինգերորդ զեկույցի պատրաստման ընթացքում հաշվի է առնվել հետևյալը՝

1) Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման երրորդ մոնիթորինգային փուլի արդյունքներն ամփոփող ազգային մակարդակով իրականացված գործնական քայլերը

#### Իրավիճակի վերլուծություն

2) Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ներկայացրած չորրորդ զեկույցից հետո ձեռնարկված միջոցները և իրականացված ծրագրերը: Ձեռնարկված քայլերը՝ ըստ հոդվածների

3) Տեղեկություններ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման դիտանցման չորրորդ փուլի կապակցությամբ: Փորձագետների կոմիտեի դիտողությունների վերաբերյալ

4) Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Հայաստանում խարտիայի կիրառման վերաբերյալ 2017 թ. մայիսի 11-ի CM/RecChI(2017)2 հանձնարարականի իրականացումը

#### 5) Աղյուսակներ

4. Ձեկույցը ներկայացնում է ազգային փոքրամասնությունների լեզուներին առնչվող հարցեր: Հարկ է հաշվի առնել, որ Հայաստանում առկա չէ «տարածաշրջանային լեզու» հասկացությունը/երևույթ, ուստի Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, ստանձնել է քաղաքականություն մշակել և գործողությունների ծրագիր սահմանել միայն ազգային փոքրամասնությունների լեզուների (ռուսերեն, հունարեն, եգիպտերեն, քրդերեն, ասորերեն) պաշտպանության և զարգացման ուղղությամբ: Միաժամանակ, Հայաստանում այլ էթնիկ խմբերի ներկայացուցչությունները, օգտվելով իշխանությունների ուշադրությունից, իրականացնում են տարբեր ծրագրեր՝ ուղղված իրենց էթնիկ խմբերի պահպանմանը և լեզվի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան ՀՀ ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշման համաձայն հաստատվել է ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան ՀՀ ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը:

5. Ձեկույցը կազմվել է Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և մարզպետարանների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա:

6. Ձեկույցի նախագիծը տրամադրվել է Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման աշխատանքների կազմակերպման պատասխանատու կառույցներին ու հաշվի են առնվել նրանց կողմից ներկայացված նկատառումները:

7. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի շրջանակում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների համաձայն ՀՀ ազգային հինգերորդ շրջանի զեկույցը պատրաստելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մարտի 13-ի 10-ի N 200-Մ/2 հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են հետևյալ պետական կառույցներն ու գերատեսչությունները՝

- ՀՀ վարչապետի աշխատակազմ,
- ՀՀ Ազգային ժողով,
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
- ՀՀ արդարադատության նախարարություն,
- ՀՀ մշակույթի նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն,
- ՀՀ վիճակագրական կոմիտե,
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,

- ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով,
- ՀՀ հեռուստառադիոընկերության խորհուրդ,
- ՀՀ առողջապահության նախարարություն:

8. ՀՀ գերատեսչությունները հինգերորդ զեկույցի մշակման ժամանակ հաշվի են առել նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կարծիքները:

## Մաս 1

**Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման 4-րդ մոնիթորինգային փուլի արդյունքներն ամփոփող ազգային մակարդակով իրականացված գործնական քայլերը**

### Իրավիճակի վերլուծություն

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

10. Հայաստանում 2003 թվականին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (փոփոխվել է 2016թ.՝ հանդիսանալով ՀՀ սահմանադրական օրենք), որի հիման վրա ձևավորվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը: 2011 թվականից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործել է ազգային փոքրամասնությունների իրավունքների իրավապաշտպան: 2012 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է «Խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչություն», որի ռազմավարական նպատակներից է՝ ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը: 2013 թվականից, ի թիվս այլնի, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության պատասխանատուն է Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդակազմը:

2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ձևավորված խորհրդարանում ստեղծվել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով: Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում իրականացրած աշխատանքների շնորհիվ, համագործակցելով Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, մշտապես և հետևողական աշխատանքներ է իրականացնում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հիմնահարցերի, նրանց խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծման ուղղությամբ:

11. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ, 4-րդ զեկույցների 11-12-րդ կետերը:

12. 2004 թվականին ձևավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (2018 թ-ի մայիսից՝ վարչապետի) աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը (այնուհետև՝ բաժին): Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կառուցվածքային այս ստորաբաժանումը՝ 1) իրականացնում է ազգային փոքրամասնություններին, կրոնի ու խղճի ազատությանն առնչվող՝ կառավարության և վարչապետի քննարկմանը կամ կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև առանձին հարցերի համապատասխանության ուսումնասիրություն կառավարության ծրագրին և քաղաքականության հիմնական ուղղություններին, աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ տալիս է համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ, 2) նախապատրաստում է իր գործունեության ոլորտների մասին տեղեկատվական նյութերն ու տեղեկանքները և ներկայացնում աշխատակազմի ղեկավարին, 3)

հսկողություն է իրականացնում իր գործունեության ոլորտներին առնչվող՝ կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ:

13. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ, 4-րդ զեկույցների 14-րդ կետը:

14. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժինը շարունակում է հետևել Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայից բխող գործողությունների ընթացքին: Դրանք են՝ տեղական ինքնակառավարման մարմիններում ազգային փոքրամասնությունների իրավունքների իրազեկման գործընթացը, ազգային փոքրամասնությունների իրավունքների գործնական իրացումը, խնդիրների ծագման դեպքում խորհրդակցությունների կազմակերպումը և միջոցառումների ձեռնարկումը: Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատողները պարբերաբար կազմակերպում են այցելություններ ու հանդիպումներ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների (մասնավորապես՝ կրթության) և հնարավորությունների մասին իրենց իրազեկելու, առկա խնդիրներին ծանոթանալու և դրանց լուծումները գտնելու նպատակով:

15. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ, 4-րդ զեկույցների 16-րդ կետը:

16. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայով սահմանված իրավունքների, պարտավորությունների և դրանց իրականացման ոլորտին առնչվող շահագրգիռ մարմիններին, կազմակերպություններին և անձանց իրազեկելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջերում (<http://www.gov.am/am/staff-structure/info/74/>) տեղադրված են ոլորտին առնչվող փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը և դրանց առնչվող զեկույցները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը՝ հայերենով և ռուսերենով, ԵՄ փորձագետների կոմիտեի կարծիքները և դրանց վերաբերող մեկնաբանությունները: Փաստաթղթերի փաթեթը պարբերաբար թարմացվում է:

Կառավարության կայքէջին հղումներ ունեն նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կայքէջերը:

17. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի աշխատողները պարբերաբար հանդիպումներ են ունենում ոլորտի շահագրգիռ կողմերի՝ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ մտավորականների, կրոնական առաջնորդների հետ, ինչպես նաև պարբերաբար այցելում են ազգային փոքրամասնությունների բնակավայրեր, որտեղ հանդիպումներ են ունենում համայնքների ղեկավարների, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենների հետ: Այս հանդիպումների նպատակն է բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածության մակարդակը և տեղերում հետևել պետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Հանդիպումների ընթացքում ազգային փոքրամասնությունների կողմից բարձրացված հարցերը հանգամանորեն ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում և ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից պարբերաբար համապատասխան հանձնարարականներ են տրվում պետական մարմիններին և գերատեսչություններին՝ ազգային փոքրամասնությունների առաջ ծագած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:

18. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ, 4-րդ զեկույցների 20-24-րդ կետերը:

19. Շարունակվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական աջակցության տրամադրումն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կրթական-մշակութային գործունեությանը, որը սկսած 2012 թ-ից կրկնապատկվել է, հասնելով 20 մլն դրամի: Նշված գումարի չափը նախատեսված է նաև 2019 թ. պետական բյուջեով:

20. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ, 4-րդ զեկույցների 26-28-րդ կետերը:

21. Մարզերում ապրող ազգային փոքրամասնությունների մասին համապատասխան տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանների կայքէջերում և հղում է արված ՀՀ կառավարության կայքէջին: Բացի այդ, Տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից մարզպետներին հանձնարարվել, իսկ Երևանի

քաղաքապետին առաջարկվել է մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կայքէջերում «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում առանձնացնել «Ազգային փոքրամասնություններ» ենթաբաժինը՝ այնտեղ գետեղելով ազգային փոքրամասնությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը վերջիններիս թվի, պատմության, հուշարձանների, մշակութային իրադարձությունների և ունեցած առաջընթացի վերաբերյալ:

22. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 30-րդ կետը:

23. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 31-րդ կետը:

## Մաս 2

**Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ներկայացրած 4-րդ զեկույցից հետո ձեռնարկված միջոցները և իրականացված ծրագրերը: Ձեռնարկված քայլերը՝ ըստ հոդվածների**

## Մաս II.

### 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հետապնդվող նպատակներն ու սկզբունքները

#### Հոդված 7. Նպատակներ և սկզբունքներ

24. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 33-37-րդ կետերը:

25. 2017 թվականի ՀՀ կառավարության որոշմամբ համայնքների խոշորացման ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների մեկ խոշորացված համայնք՝ Ալազյազը, որի կազմի մեջ ընդգրկվել են Ալազյազ, Ավշեն, Սադունց, Ճարձակիս, Միրաք, Շենկանի, Ջամշու, Ռյա-Թազա, Կանիաշիք, Միփան և Միջնատուն բնակավայրերը:

ՀՀ Արմավիրի մարզի ազգային փոքրամասնությունները հիմնականում բնակեցված են գյուղական համայնքներում, սակայն քաղաքներում ևս ապրում են ռուսներ, եզդիներ և ուկրաինացիներ: Մարզի ամենամեծ եզդիական համայնքը Նալբանդյանն է: Այստեղ ապրում է շուրջ 800 եզդի: Ֆերիկ գյուղում ապրում 1 476 եզդի:

Եզդիները մեծ թիվ են կազմում նաև Արտաշար գյուղում (637): Գեղարքունիք - ՀՀ Գեղարքունիքի մարզի 57 համայնքներում 2019 թվականի ապրիլ ամսվա տվյալներով բնակվում են 605 եզդի, ռուս, ասորի, քուրդ, հույն, ուկրաինացի և այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: 605-ից 389-ը բնակվում են մարզի քաղաքային, իսկ 216-ը՝ գյուղական համայնքներում:

Շիրակի մարզում եզդիները բնակվում են գյուղական բնակավայրերում՝ հանդիսանալով խառը բնակչության մի մասը: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ազատանում բնակվում է 260 եզդի (համայնքում հաշվառված բնակչության 4.9%), Հացիկում՝ 47 (գյուղում հաշվառված բնակչության 4.6%), Կրաշենում՝ 17 (գյուղում հաշվառված բնակչության 6.8%), ովքեր կազմում են մարզում հաշվառված բնակչության 0.11%-ը:

Համայնքի վարչական սահմանների փոփոխություններ վերջին տարիներին չեն կատարվել, իսկ առկա վարչական և աշխարհագրական սահմանները չեն խոչընդոտում եզդիներին լեզվի զարգացմանը: Ընդհանուր առմամբ 2016-2017 թթ. ընթացքում մարզում համայնքների խոշորացման սկզբունքով ստեղծված Ախուրյան, Արփի, Աշոցք, Անի համայնքներում ևս չկան փոքրամասնության լեզվի զարգացման խոչընդոտներ:

2011թ. մարդահամարի տվյալներով՝ ասորիների գերակշիռ մեծամասնությունը տեղակայված է Արարատի մարզում՝ 1625 մարդ (58.7%):

Ասորիները բնակեցված են Արմավիրի մարզի Նոր Արտազերս գյուղում: Այս գյուղում ապրում է 70 ասորի:

Ասորիներով բնակեցված Կոտայքի մարզի Արզնի համայնքը չի միավորվել որևէ այլ համայնքի հետ, քանի որ վերջինիս հարևանությամբ առկա են միայն հայաբնակ համայնքներ և այդ համայնքների հետ միավորումը կփոփոխեր նորաստեղծ համայնքում ասորի բնակչության կառուցվածքը:

Լոռու մարզում 2011թ. մարդահամարի տվյալներով բնակվում են 3152 ռուս, 360 հույն, 652 եզդի՝ նրանց գերակշիռ մասը՝ Տաշիրի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջաններում: Վերջին տասնամյակում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով մարզից արտագաղթել են նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

Տավուշի մարզում ազգային փոքրամասնություններով հավաք (կոմպակտ) բնակեցված բնակավայրեր չկան: Միայն Դիլիջան քաղաքում ձևավորված է ռուսների (մոլդականների) համայնք, որն ունի 215 տնտեսություն՝ 563 բնակչով:

Մարզի տարբեր համայնքներում ոչ հավաք ձևով բնակվում են այլ ազգերի 936 ներկայացուցիչներ, որոնց մեծ մասը՝ 705, ռուսներ են, որոնց շփման հիմնական լեզուն հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումները նախատեսվում է շարունակել 2019-2020 թվականներին: Այդ ընթացքում կառավարությունը հավատարիմ է մնալու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված համայնքների նկատմամբ մինչ այժմ որդեգրած քաղաքականությանը:

26. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ ավագանին որոշում է ընդունում փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանումների վերաբերյալ:

Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշում ընդունելու ավագանու լիազորությունը սահմանված է օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով:

Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքի դպրոցի դասարաններից մեկը, որտեղ սովորել է 2016 թ. Ապրիլյան քառօրյայի պատերազմի հերոս Քյարամ Սլոյանը, անվանակոչվել է հերոսի անունով:

Արմավիրի մարզի Ֆերիկի հիմնական դպրոցն անվանակոչվել է ազգությամբ եզդի նախկին տնօրեն, գրող Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անունով:

Լոռու մարզի Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում բնակավայրերի անվանումների ցուցանակները և՛ հայերեն են, և՛ ռուսերեն:

Կոդես և Յաղդան համայնքներում հույների մեծ մասը հեռացել է, մնացել են այն հույները, որոնք ամուսնացել են հայերի հետ և բավարար տիրապետում են հայերենին: Համայնքի ղեկավարին առաջարկվել է տեղադրել նաև հունարեն ցուցանակներ, սակայն վերջինս, հաշվի առնելով վերոգրյալը, դրա անհրաժեշտությունը չի տեսնում:

Կոտայքի մարզի Չովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրվել են տեղագրական ցուցանակներ:

27. Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն աջակցելու նպատակով ուսումնական ծրագրեր ստեղծելուց, դասագրքեր հրատարակելուց, մանկավարժական կադրեր պատրաստելուց բացի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական միջոցներ են հատկացվում էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին՝ նրանց կողմից հրատարակվող պարբերական մամուլի տպագրման գործընթացը խրախուսելու համար: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն աջակցություն է ցուցաբերում ազգային 11 փոքրամասնությունների լեզուներով հրատարակմանը՝ լույս է տեսել 13 մամուլ և 1 ամսագիր: Հայաստանի հանրային ռադիոն ամեն օր իրականացնում է հեռարձակում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով՝ եզդիերեն, քրդերեն, ռուսերեն, ասորերեն, հունարեն: Ազգային փոքրամասնությունների լեզուներով, բացի հիմնական լրատվական թողարկումներից, լինում են նաև պատմամշակութային, ազգագրական թեմաներով հաղորդումներ: Հայաստանի Հանրապետության օրենքների կարևոր մասը թարգմանված է և շարունակվում է թարգմանվել ռուսերեն:

28. Ազգային փոքրամասնությունների կողմից վերջին 5 տարվա ընթացքում ակտիվ իրականացվում են գրահրատարակչական ծրագրեր: 2015 թ. հրատարակվել է քուրդ հրապարակախոս Ամարիկե Մարդարի «Կարոտ» վեպը՝ քրդերենով, ռուս հեղինակ Ալեքսանդր Պոլյադոնսկիի «Արծաթե թելը» ռուսերեն վեպը թարգմանվել է

հայերեն: 2016 թ. հրատարակվել են Մոսկոյի «Լեռների ծիածանը» պատմվածքների ժողովածուն (եզդիերեն) և հույն հեղինակ Ն. Նիկոլաիդի ու համահեղինակ Ա. Խուրշուդյանի «Մակկիլարի» գիրքը: 2017 թվականին հրատարակվել են եզդի հեղինակ Ամո Շառոյանի «Շանգալի ցավը» արձակ ժողովածուն և Ալիխանե Մամեի քրդերեն «Բանաստեղծությունները», 2018 թվականին՝ տարբեր եզդի հեղինակների «Եզդիական հեքիաթներ» ժողովածուն: **Աղյուսակ 1-4:**

29. Հայաստանի ազգային գրադարանում 2015-2018 թթ. առկա է ազգային փոքրամասնությունների լեզուներով գրականություն. ռուսերենով՝ 1.609144 միավոր դասագիրք, գեղարվեստական, կրոնական, լեզվաբանական, փիլիսոփայական, արվեստին, պատմությանը, բնական գիտություններին վերաբերող գրքեր, եզդիերենով՝ 29 միավոր, ասորերեն՝ 5 միավոր, քրդերեն՝ 672 միավոր, ուկրաիներեն՝ 654 միավոր, հունարեն՝ 1042 միավոր, վրացերեն՝ 5150 միավոր, պարսկերեն՝ 2251 միավոր դասագիրք: Ընթերցողների թիվը նշված տարիների ընթացքում կազմել է շուրջ 1000 մարդ: Ընթերցվում է հիմնականում ռուսերեն (դասագիրք, գեղարվեստական գրականություն, կրոնական գրականություն, արվեստ, պատմություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ): Փոքրամասնություն կազմող ազգերից Հայաստանի ազգային գրադարանում գրանցված են 2 եզդի, 25 քուրդ, 3 ասորի ընթերցող:

Աջակցություն է ցուցաբերվել ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլի, գրականության հրատարակման և մամուլի էջերի թվայնացման գործընթացի շարունակականության ապահովմանը:

Հայաստանի ազգային գրադարանի կողմից իրականացվող թվայնացման գործընթացի առաջնահերթություններից է ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլի և գրականության թվայնացումը: «Հայ մամուլ» շտեմարանում ազգային փոքրամասնությունների հրատարակած բոլոր պարբերականները գրանցված են, իսկ հինգ պարբերականների՝ Էզդիխանա, Ե., 2001 (եզդիերեն), Ռյա Թագա, Ե. 1930 (քրդերեն), Գուլոս Արմենիի, Ե. 1991 (ռուսերեն), Մագեն Դավիդ, Երևան, 2002 (եբրայերեն, հայերեն), Պոկա մի ժիվի. Pęki my żyjemy, Ե., 2003 (լեհերեն) թվային տարբերակները տեղադրված են:

30. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 43-44-րդ կետերը:

31. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ազգային փոքրամասնությունների մշակույթների զարգացման նպատակով հատկացված և կահավորված Ազգությունների մշակույթի կենտրոնը հնարավորություն է ընձեռում ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանը, օգտագործմանն ու զարգացմանը: Այդ տարածքից կարող են օգտվել Հայաստանի բոլոր էթնիկ համայնքները:

32. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 46 կետը:

33. Ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով գրավոր խոսքի գործածումը հեշտացնելու համար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ համապատասխան լեզուներով:

Հայ-իսրայելական մշակութային հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածմանն ու պահպանմանը նպաստելու նպատակով 2017թ. Գ.Հայաստանի պետական ֆիլհարմոնիազ ՊՈԱԿ-ում իրականացվել են Հայաստանում հրեական Գ.Մագեն Դավիթ թերթի լույսընծայման 30-ամյակին նվիրված ծրագիրը և Գուկրաինազ Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիազ ՀԿ-ի, Գ.Դնիպրոզ համույթի ստեղծման, Գ.Դնիպրո-Սլավուտիչ թերթի լույսընծայման 20-ամյակին նվիրված միջոցառումները:

2015-2018 թվականներին իրականացվել են ՀՀ պետական բյուջեով նախատեսված և ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդում հաստատված ամենամյա դրամաշնորհային ծրագրեր:

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ մշակույթի տարբեր ոլորտներում ընդգրկման և մասնակցության նպատակով կազմակերպվել են նաև նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ: **Աղյուսակ 1-1:**

34. Հայաստանի պետական ֆիլհարմոնիայում ամեն տարի կազմակերպվում է «Տարբեր ազգերի երգեր ու պարեր» փառատոնը, որին մասնակցում են տարբեր ազգային փոքրամասնությունների պարային խմբեր, մեներգիչներ:



35. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի «Մշակույթ» բաժնի «Ազգային փոքրամասնությունների էթնիկ ինքնության պահպանման և մշակույթի լիարժեք դրսևորման նպատակով» կետի նպատակն է լրացուցիչ պայմաններ ստեղծել ազգային փոքրամասնությունների էթնիկ մշակույթի ներկայացման համար, աջակցել ազգային փոքրամասնությունների լեզուներով գրքերի և պարբերական մամուլի հրատարակմանը:

36. Աշխատանքներ են տարվում ազգային փոքրամասնությունների ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի գրանցման և ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության պետական ցանկերում ներառման ուղղությամբ: 2015-2017 թվականներին Գյումրիում իրականացվել է «Հացի փառատոն» միջոցառումը, որին մասնակցել են նաև ազգային փոքրամասնությունները՝ ներկայացնելով ազգային հացատեսակներն ու տարազները: Այդ ամենը միաժամանակ նպաստում է ազգային փոքրամասնությունների միջև կապերի պահպանմանն ու զարգացմանը, արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը:

37. Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված գործում են 11 էթնիկ համայնքների 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքների մի մասն ուղղված է նաև իրենց մայրենի լեզուների պահպանությանն ու զարգացմանը: Ասորական, եգիպտական, ռուսական, հունական, քրդական էթնիկ համայնքներից բացի, ակտիվորեն գործում են ուկրաինական, հրեական, լեհական, վրացական, բելառուսական, գերմանական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները: Հայաստանում գործում են ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միություններ, ասոցիացիաներ, որոնք միավորում են տարբեր էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները:

Այս համատեքստում պետք է նշենք նաև, որ 2018թ. օգոստոսին ՀՀ վարչապետի աշխատակազմ է դիմել նորաստեղծ «Պատմական Աղվանքի ուղի ժողովրդի վերածնունդ» ՀԿ նախագահը՝ կազմակերպության ճանաչողական բնույթի միջոցառման կազմակերպմանը աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև Հայաստանում բնակվող ուղիներին ազգային փոքրամասնության կարգավիճակ տալու առաջարկով: Դիմումն ուղղվել է համապատասխան գերատեսչություններ, ինչի արդյունքում Մշակույթի նախարարության կողմից կազմակերպությանը տրամադրվել է ֆինանսական օժանդակություն՝ միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Միջոցառումն իրականացվել է 2018թ. աշնանը Բագրատաշենում, որտեղ բնակվում են որոշակի քանակությամբ ուղիներ: Հրավիրվել և մասնակցել են նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Ինչ վերաբերում է ուղիներին ազգային փոքրամասնության կարգավիճակ տալուն, ապա դրա համար անհրաժեշտ են համապատասխան համոզիչ հիմնավորումներ, որոնք առայժմ առկա չեն, իսկ վիճակագրական ծառայության կողմից տրամադրած տեղեկության համաձայն 2001թ. մարդահամարին իրենց ուղիներ համարած անձանց թիվը եղել է փոքրաթիվ, այդ իսկ նկատառումով այն չի հրապարակվել, հետևաբար նաև չի ներառվել 2011թ. մարդահամարի հարցաթերթում թվարկված ազգությունների ցանկում (2011թ. մարդահամարի հարցաթերթում ազգային կազմի վերաբերյալ հարցադրումը կրում էր կամավոր բնույթ՝ հնարավորություն ընձեռելով պատասխանողին հրաժարվել այդ հարցին պատասխանելուց):

38. 2019թ. մայիսի 3-ին ուժի մեջ է մտել ՀՀ վարչապետի որոշումը՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի ստեղծման և խորհրդի կազմը հաստատելու մասին:

Այդ որոշման համաձայն նոր Խորհուրդը գործում է վարչապետի գլխավոր խորհրդականին առընթեր, իսկ խորհրդի գործունեության կազմակերպչական տեխնիկական ապահովումն իրականացնում է վարչապետի աշխատակազմը՝ համապատասխան ստորաբաժանման միջոցով:

Նույն որոշմամբ հաստատվել է նաև խորհրդի անդամների կազմը:

Խորհրդի կազմը, անդամների ընտրության կարգը, գործառույթներն ու նպատակները մնացել են անփոփոխ: Բացի այդ, ինչպես նախկինում, այնպես էլ 2018թ. ապրիլից ՀՀ-ում կառավարման խորհրդարանական համակարգի անցնելու արդյունքում՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդը շարունակում է գործել երկրի ղեկավարին, այսինքն՝ ՀՀ վարչապետին առընթեր և ամենաբարձր մակարդակով պետական հոգածության ներքո գտնվել:

Խորհրդի աշխատակարգը հաստատում է խորհուրդն իր անդրանիկ նիստում:

Պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին հատկացված 20 մլն դրամի չափով գումարի բաշխման մեխանիզմը քննարկվելու և հաստատվելու է խորհրդի անդրանիկ նիստում:

2019թ. մայիսի 17-ին կայացած խորհրդի նիստում հաստատվել է խորհրդի աշխատակարգը, ինչպես նաև որոշվել է՝

1) պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին հատկացված 20 մլն դրամից 9 մլն դրամը հավասարապես բաշխել խորհրդում 11 ազգային փոքրամասնությունների համայնքները ներկայացնող կազմակերպությունների միջև, իսկ 1 մլն դրամը փոխանցել կազմակերպություններից մեկին, այն է. «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ-ին՝ Խորհրդի միասնական ծրագրերի իրականացման համար.

2) 20 մլն դրամի մյուս 10 մլն դրամը բաշխել համաձայն ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների կողմից (ընդ որում նաև խորհրդի անդամ չհանդիսացող) նախապես ներկայացված և Խորհրդում հաստատված ազգային մշակույթի զարգացմանը, լեզվի և ինքնության պահպանմանը, ինչպես նաև իրավական դաշտում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի՝ ազգային-պետական կառույցներ չունեցող և (կամ) մեծաթիվ համայնքներ (եզդիական, ասորական, քրդական) ներկայացնող կազմակերպությունների կարիքների առաջնահերթ բավարարմամբ.

3) գումարել արտահերթ նիստ 2019թ. մայիսի 21-ին ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի քննարկման և հաստատման համար:

39. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի N 674-Ն որոշմամբ հաստատված՝ 2011թ. ՀՀ մարդահամարի ծրագրի (հարցաշարի) համաձայն՝ տնային տնտեսության անդամների ազգության, մայրենի և այլ լեզուներ տիրապետելու վերաբերյալ հարցերն իրենց բնույթով եղել են «փակ», այսինքն հարցաթերթում հնարավոր պատասխանների ցանկն առաջարկված է եղել: Ազգության հարցի հնարավոր պատասխանների ցանկում ներառված են եղել՝ «հայ, եզդի, ռուս, ասորի, հույն, ուկրաինացի, քուրդ, լեհ, բելառուս, վրացի, հրեա, գերմանացի, պարսիկ, այլ ազգություն», իսկ մայրենի և այլ լեզուներ տիրապետելու հարցերինը՝ «հայերեն, եզդիերեն, ռուսերեն, ասորերեն, հունարեն, ուկրաիներեն, քրդերեն, լեհերեն, բելառուսերեն, վրացերեն, եբրայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն, թուրքերեն, այլ լեզու» տարբերակները: Ըստ ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքների՝ երկրի բնակչության 2,1 տոկոսն են կազմել ազգային փոքրամասնությունները, իսկ 2011թ.՝ 1.9 տոկոսը: Ընդ որում, նրանցից 0,1 տոկոսը խմբավորվել են այլ ազգությունների թվաքանակում, առանձին ազգությունների փոքրաթիվ լինելու հանգամանքով պայմանավորված, և այդ տվյալները հրապարակման ենթակա չեն եղել, որպեսզի պահպանվի անհատական տվյալների գաղտնիությունը՝ համաձայն «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի (ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018թ-ից «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից, որի 7-րդ գլխով սահմանվում են վիճակագրական գաղտնիության վերաբերյալ դրույթները:

Ազգային փոքրամասնությունների մեծ մասի լեզուներով համակարգված ուսումնական ծրագրեր անհնար է իրականացնել թե՛ լեզվի կրողների փոքրաթվության, թե՛ Հայաստանի տարածքում նրանց ոչ հավաք ապրելու հետևանքով, ինչպես նաև որոշ լեզուների հանդեպ նվազ պահանջարկի կամ պահանջարկի բացակայության պատճառով: 2011 թվականին իրականացված մարդահամարի տվյալներով Հայաստանում ազգային փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմել է 57053 (2001թ.՝ 67657) մարդ: Նրանց մեծամասնությունը՝ 35308 մարդ կազմել են եզդիները (2001թ.՝ 40.620 մարդ, կամ Հայաստանի ոչ հայազգի բնակչության մոտ 62 տոկոսը): Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմը 2001 և 2011 թվականների մարդահամարների տվյալներով ներկայացվում է ստորև՝ աղյուսակում: **Աղյուսակ 2-1:**

ՀՀ կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի N 1115-Ն որոշման համաձայն, հերթական մարդահամարը ՀՀ-ում կանցկացվի 2020թ. հոկտեմբերի 18-27-ը, իսկ փորձնական մարդահամարը՝ 2019թ. հոկտեմբերի 3-12-ը, երկրի բնակչության մեկ տոկոսն ընդգրկող՝ մեկ քաղաքային և 4 գյուղական բնակավայրերում (Շիրակի և Կոտայքի մարզեր): Ընդ որում, առաջին անգամ ՀՀ-ում մարդահամարը կանցկացվի բնակչության պետական ռեգիստրի տվյալների կիրառությամբ, իսկ լրացուցիչ բնութագրիչների մասին տվյալները կհավաքագրվեն՝ 25 տոկոս

ընտրանքային հարցումներով: Ներկայացված են նաև վարչական գրանցումներով՝ ծննդյան և մահվան դեպքերի, ինչպես նաև բնակչության վարչական տեղաշարժերի բաշխումն ըստ ազգային պատկանելության: **Աղյուսակ 2-2:**

Այնուամենայնիվ, ազգային փոքրամասնությունների լեզուների մեծ մասն այս կամ այն ձևով ու չափով դասավանդվում է տարբեր մակարդակների կրթական հաստատություններում: Օրինակ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների և ռուս զինվորների երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար պետության ջանքերի շնորհիվ Շիրակի մարզի Գյումրու թիվ 4 մանկապարտեզում գործում է ռուսական խմբակ, 2006 թվականին «Երևանի սննդի արդյունաբերության պետական քոլեջը» վերանվանվեց «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ», որտեղ անցկացվում են նաև հունարենի դասընթացներ:

40. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 56-58-րդ կետերը:

41. Մկսած 2007 թվականից՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդականին կից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդում ներկայացված կազմակերպությունների առաջադրմամբ և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի միջնորդությամբ յուրաքանչյուր ուսումնական տարում արտամրցությային տեղեր են տրամադրվել եզդիական, քրդական և ասորական համայնքների ներկայացուցիչներին՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտական ֆակուլտետում ուսանելու համար: 2010 թվականից սկսած՝ այդ արտոնություններից հնարավորություն ունեն օգտվել նաև մյուս ազգային փոքրամասնությունների այն ներկայացուցիչները, որոնց առաջադրում են Խորհրդում համապատասխան համայնքները ներկայացնող կազմակերպությունները և որոնք ցանկություն են հայտնում սովորելու բարձրագույն ուսումնական հաստատությունների մշակույթի և լեզվի հետ առնչվող բաժիններում՝ ազգային մշակույթն ու լեզուն զարգացնելու նպատակով:

Հետագայում Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի միջնորդությամբ այդ ուսանողների համար ուսման վարձի ամբողջական կամ մասնակի զեղչեր են կիրառվում:

42. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ինչպես եզդի ուսանողների ուսման, այնպես էլ եզդիական համայնքը ներկայացնող երիտասարդական կազմակերպությունների կողմից առաջարկված մշակութային ծրագրերի իրականացման համար:

Յուրաքանչյուր տարի ազգային փոքրամասնության համայնքի ղեկավարի միջնորդագրի հիման վրա համապատասխան մասնագիտությունների մրցությային քննություններից դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու հարցը քննարկվում է ՀՀ բուհերի ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովի նիստում:

Դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների համար պահուստային տեղերից հատկացվում են անվճար ուսուցման տեղեր:

Աղյուսակ 1-ում ներկայացված է տեղեկատվություն՝ 2007-2016թթ. ընթացքում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին հատկացված անվճար ուսուցման տեղերի թվաքանակի վերաբերյալ: **Աղյուսակ 4-1:**

2017 և 2018 թվականներին ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ազգային փոքրամասնության համայնքների ղեկավարների կողմից համապատասխան միջնորդագիր չի ստացել:

Աղյուսակ 2-ում ներկայացված է տեղեկատվություն՝ 2018 թվականի դրությամբ ՀՀ բուհերում սովորող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների վերաբերյալ: **Աղյուսակ 3:**

Հետբուհական կրթական ծրագրով սովորում են ազգային փոքրամասնությունների 4 ներկայացուցիչներ, նրանցից 3-ը (ասորական, եզդիական և ուկրաինական համայնքներից) սովորում են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, եզդիական համայնքի ևս մեկ ներկայացուցիչ սովորում է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում:

43. Բոլոր համապատասխան փուլերում ազգային փոքրամասնությունների լեզուների դասավանդումը և ուսուցումն ապահովելու համար Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է շարունակական ծրագրեր, որոնք նպաստում են ազգային փոքրամասնությունների կրթության արդյունավետ կազմակերպմանը: Սակայն

ձեռնարկվող քայլերն արդյունավետ կլինեն միայն այն դեպքում, եթե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ցանկություն հայտնեն օգտվելու ստեղծվող հնարավորություններից:

44. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ գեկույցի 62-65-րդ կետերը:

45. Ինչպես ներկայացվել է 3-րդ և 4-րդ գեկույցներում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածն ի թիվս այլ հատկանիշների՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագման և այլն, առանձին նշում է նաև լեզվի և ազգային փոքրամասնությանը պատկանելության հանգամանքով պայմանավորված խտրականության արգելման մասին: Սահմանադրության 56-րդ հոդվածը հաստատում է, որ. «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»:

Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է նաև «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հոդվածներով:

Վերոնշյալ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանը և զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը»:

Նույն՝ ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է՝ Հայաստանի Հանրապետությունում մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, 6-րդ հոդվածը՝ մշակութային արժեք է համարում նաև լեզուները, ազգային ավանդույթները և սովորույթները, աշխարհագրական տեղանունները:

46. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ գեկույցի 67-68-րդ կետերը:

47. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ գեկույցի 69-72-րդ կետերը:

48. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ և ՀՀ 3-րդ գեկույցների 73-րդ կետերը:

49. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ գեկույցի 74-րդ կետը:

50. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ գեկույցի 76-րդ կետը և ՀՀ 4-րդ գեկույցի 77-78-րդ կետերը:

51. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ գեկույցի 79-80-րդ կետերը:

## Մաս 2

**Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ներկայացրած 4-րդ գեկույցից հետո ձեռնարկված միջոցները և իրականացված ծրագրերը: Ձեռնարկված քայլերը՝ ըստ հոդվածների**

### Հոդված 1. Կրթություն

52. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»: Նույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ: «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության տակ առնված լեզուները կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին տարրական կրթությունը հասանելի և մատչելի է էթնիկ լեզուներով: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի կողմից մշակվել է Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանի) ուսումնական պլանը՝ համաձայն որի պետական բաղադրիչի ուսումնական առարկաների ցանկում ընդգրկված ազգային փոքրամասնությունների «Մայրենի լեզու և գրականություն» առարկայի ուսուցման համար ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվին և գրականությանը, ինչպես նախորդ ուսումնական տարիներին, այնպես էլ 2016-2018թթ., 1-12-րդ դասարաններում հատկացված է շաբաթական 41 դասաժամ՝ նրանց համար գործող ուսումնական ծրագրերին համապատասխան: Բացի այդ, խառը բնակության վայրերում, որտեղ ազգային փոքրամասնությունների թիվը փոքր է, նախատեսված է նաև լեզվի ֆակուլտատիվ ուսուցման հնարավորություն:

53. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները: Նախադպրոցական հաստատությունների աշխատանքների կազմակերպումն ուղղակիորեն կախված է տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական հնարավորություններից: 2008-2015 թվականների նախադպրոցական կրթության բարեփոխումների ռազմավարական ծրագրում հատուկ ուշադրություն է դարձվել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված տարածքներում մանկապարտեզների ցանցի ընդլայնմանը: Արդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նպատակ էր դրվել մինչև 2015 թվականն ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%-ի: Առաջնայությունը տրվել էր այն համայնքներին, որտեղ ազգային փոքրամասնությունները մեծ թիվ են կազմում, կամ որտեղ նախադպրոցական ուսումնական հաստատություններ չեն գործում: **Աղյուսակ 5:**

54. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» N 29-Ն հրամանի երեխաների խմբերի խտության վերաբերյալ աղյուսակում ազգային փոքրամասնությունների երեխաների համար նախատեսված է թերկումպլեկտավորված համակազմով խմբերի գործարկման հնարավորությունը: Այսպես, էթե հանրապետության նախադպրոցական հաստատությունների խմբերում երեխաների թիվը սահմանված է 25-30, ապա ազգային փոքրամասնություններով երեխաների խմբերի գործարկումը թույլատրվում է 8-10 երեխայի դեպքում: Մակայն, հաշվի առնելով նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների քիչ թվակազմը, և՛ մարզերում, և՛ Երևան քաղաքում (ընդգրկվածությունը տարբեր վարչական շրջաններում) առանձնացված խմբերի գործարկում չի իրականացվում:

55. Արագածոտնի մարզում 2016թ. վերահրատարակվել է «Եզդիերեն» 1-12-րդ դասարանների դասագրքերը: Արարատի մարզում 100-ական օրինակով դպրոցներին են տրամադրվել «Եզդիերեն այբբենարան», 5-11-րդ դասարանների «Եզդիերեն լեզու» և «Եզդիերեն գրականություն», 10-11-րդ դասարանների «Եզդիերեն» դասագրքեր: Արմավիրի մարզում, համագործակցելով Հայաստանի փոքրամասնությունների ազգային կառույցների հետ, ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար կազմակերպվում է ազգային լեզվի ուսուցում մարզի այն համայնքների հանրակրթական դպրոցներում, որտեղ կան ազգային փոքրամասնությունների համայնքներ: Մարզի 21 դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն, ևս մեկ դպրոցում՝ ասորերեն: Դասընթացներում ընդհանուր թվով ներգրավված է 1133 երեխա, բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով: Շիրակի մարզի Ազատան համայնքում բնակվող ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի երեխաների համար համայնքի միջնակարգ դպրոցում ուսուցանվում է եզդիերեն: Դասավանդող ուսուցիչն աշխատում է շաբաթական 6 դասաժամ ծանրաբեռնվածությամբ և վարձատրվում սահմանված դրույքաչափով: Ուսուցումն իրականացվում է եզդիերեն դասագրքերով, որոնք թարմացվել և վերահրատարակվել են 2018 թվականին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվերով՝ «Հյուսիսային մարզերի եզդիներ միավորում» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Արագածոտնի մարզի համար վերահրատարակվել են եզդիերենի և քրդերենի դասագրքերը:

Կոտայքի մարզում բնակվող ասորիները (Արգնի) և եզդիները (Զովունի) ակտիվորեն մասնակցել են «Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության ամենամյա փառատոնին և մայրենի լեզվով ներկայացրել իրենց ազգային հեքիաթները:

Շիրակի մարզում գործում է հունական համայնքի կիրակնօրյա դպրոց, հունարենի ուսուցումը կազմակերպվում է շաբաթական երեք անգամ՝ շաբաթ, կիրակի և չորեքշաբթի օրերին: **Աղյուսակ 4-2:**

«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանում ԱՄՆ և Կանադայի դեսպանատների ֆինանսավորմամբ 2018-2019 թվականներին իրականացրեց «Եզդի կանանց/աղջիկների կրթության իրավունքի խթանում» և «Եզդի աղջիկների և կանանց կրթության իրավունքի պաշտպանությունն Արմավիրի և Արագածոտնի մարզերում բնակչության իրազեկության բարձրացման և ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցով» ծրագրերը, որոնց նպատակն էր նպաստել եզդի կանանց և աղջիկների կրթության իրավունքի իրականացմանը, ուժեղացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը:

Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում 2019թ. դրությամբ սովորում է ազգությամբ եզդի 418 աշակերտ, քուրդ՝ 4, ասորի՝ 11, ռուս՝ 344, հույն՝ 16, ուկրաինացի՝ 14, հրեա՝ 4, այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչ՝ 86 աշակերտ:

Կարևորվել են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար դպրոցներում ուսումնական բազայի բարելավման և կադրերի մասնագիտական զարգացման գործընթացները: 2018-2019 ուստարվա համար պատվիրվել է «Խոսիր ասորերեն» (1-ին դասարան), «Խոսիր և գրիբ ասորերեն» (2-րդ դասարան), «Ալափ-Բիթ» (3-րդ դասարան), Քրդերեն (1, 4, 5, 6-րդ դասարան) «Եզդիերեն» (1-4-րդ, 11-րդ, 12-րդ դասարան) դասագրքերը: Հանրակրթական դպրոցներում ազգային փոքրամասնությունների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ (եզդիերենի 3 ուսուցիչ՝ 2018թ., ասորերենի 2 ուսուցիչ՝ 2017թ.):

«Ազգային փոքրամասնությունների երեխաների համար որակյալ կրթություն ստանալու հնարավորության ընդլայնման շրջանակում 2017 թվականից Երևանի քաղաքապետարանի NN 66, 107, 136 դպրոցներում գործում են եզդիերենի անվճար խմբակներ: Խմբակներում ընդգրկված է I-XII դասարանների ազգությամբ եզդի 47 աշակերտ:

56. Արարատի մարզի Վերին Դվինի միջնակարգ դպրոցում «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում հիմնադրվել է նախակրթարան, որտեղ հաճախում են նաև ազգային փոքրամասնությունների 4-5 տարեկան երեխաներ:

Շիրակի մարզի նախադպրոցական կրթության բնագավառում «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ծրագրով իրականացվում է մարզի հանրակրթական դպրոցներում գործող 74 նախակրթարանների գործունեությունը, այստեղ հաճախում է 1003 երեխա: Մարզի Ազատան համայնքի հանրակրթական դպրոցի նախակրթարան հաճախում է 1 եզդի երեխա:

Մյուս մարզերում ազգային փոքրամասնությունների դպրոցական շենքերում նախադպրոցական կրթական օջախներ չկան:

Երևանի ենթակայության մանկապարտեզներում, որպես լրացուցիչ կրթական ծառայություն, իրականացվում է ռուսերենի և անգլերենի ուսուցում: Երեխաները նշված գործընթացին մասնակցում են ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ և ընտրությամբ:

57. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 90-րդ կետը:

58. Տարրական կրթության շրջանակներում ապահովվում է ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս, և այդ ուսուցումը կազմակերպվում է նույնիսկ աշակերտների անբավարար թվի դեպքում: Եզդիների և քրդերի բնակության վայրերում գյուղական դպրոցներում եզդիերենի և քրդերենի ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է համապատասխան մասնագետի առկայության դեպքում՝ անկախ սովորող երեխաների թվից: Ասորերենի ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է Վերին Դվին, Դիմիտրով, Արգնի, Նոր Արտագերս գյուղերի միջնակարգ դպրոցների, Երևանի Պուշկինի անվան N 8 հիմնական դպրոցի տարրական դասարաններում և Ա. Մարգարյանի անվան N 29 ավագ դպրոցում՝ նույնիսկ 2-3 երեխայի մասնակցության դեպքում:

59. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից համապատասխան առարկայական ծրագրերի հիման վրա 2002 թվականին հրատարակվել է քրդերենի «Զմանեղե» այբբենարանը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ֆինանսավորմամբ հրատարակվել են քրդերենի «Այբբենարանը» (2009թ.), քրդերենի Մայրենի լեզվի 2-րդ, 3-րդ, 4-րդ (2012թ.) և 5-րդ (2014թ.) դասարանների դասագրքերը: 2014թ. հրատարակվել են նաև քրդերենի Մայրենի լեզվի և գրականության 6-րդ և 7-րդ դասարանների դասագրքերը: 2009-2016թթ. ընթացքում հրատարակվել են քրդերենի 1-12-րդ դասարանների դասագրքերը: **Աղյուսակ 4-3:**

60. ՀՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսավորմամբ իրականացվել է եզդիական լեզվի և գրականության տարրական, միջին և ավագ դպրոցների դասարանների դասագրքերի հրատարակումը: 2014թ. վերահրատարակվել է Եզդիերենի այբբենարանը: Հրատարակվել են նաև «Եզդիերեն-2» (2011թ.), «Եզդիերեն գրականություն-3» (2012թ.), «Եզդիական լեզու և գրականություն» 4-րդ և 5-րդ (2013թ.) և 6-րդ, 7-րդ (2014թ.) և 8-րդ (2011թ.), 9-րդ (2012թ.), 11-րդ (2014թ.) դասարանների դասագրքերը: 2015թ. ՀՀ ԿԳ նախարարության կողմից հրատարակվել է Հանրակրթական դպրոցի եզդիերենի 12-րդ դասարանի դասագիրքը և 1-12-րդ դասարանների ծրագիրը («Սպիկա» հրատարակչ. 96 էջ, եզդիերեն լեզվով): **Աղյուսակ 4-3:**

61. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 95-րդ կետը:

62. Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում սովորում է ազգային փոքրամասնությունների 888 աշակերտ, որից 511 տղաներ են, 377-ը՝ աղջիկներ: Մարզի Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքների դպրոցներում սովորում է 10 աշակերտ. 4 տղա, 6 աղջիկ:

Գեղարքունիքի մարզային ենթակայության դպրոցներում սովորում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ հանդիսացող 36 աշակերտ այդ թվում՝ 16 քուրդ, 11 ռուս, 4 եզդի, 2 ուկրաինացի, 2 հույն և 1 վրացի:

Որոշ ազգային փոքրամասնության պատկանող անձինք ճանաչում են ռուսերենը որպես իրենց փոքրամասնության լեզու և կցանկանային, որ ռուսերենը շարունակի գործածվել որպես իրենց երեխաների կրթության լեզու: Ազգային փոքրամասնություններին պատկանող շատ մարդիկ տիրապետում են նաև հայերենին: Հաշվի առնելով Սևան և Գավառ քաղաքներում բնակվող ռուսների քանակը՝ ռուսաց լեզվի դասավանդման և ուսուցման նպատակով Գավառի N 1 և N 4 հիմնական դպրոցներում գործում են ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ դասարաններ, իսկ Սևանի ավագ և հմ. 3 հիմնական դպրոցներում՝ ռուսերենի ուսուցմամբ դասարաններ:

Լոռու մարզի Վանաձորի հմ. 4, Ստեփանավանի N 2 հիմնական, Լերմոնտովոյի և Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոցներում ազգային փոքրամասնությունների ուսուցումը և դաստիարակությունը կազմակերպվում են իրենց մայրենի ռուսերեն լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Ռուսաց լեզվի խորացված ուսուցումն իրականացվում է Գյումրու NN 1, 7, 23 հիմնական և Գյումրու N 2 ավագ դպրոցներում: Շիրակի մարզի Ագատան համայնքում բնակվող ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի երեխաների համար համայնքի միջնակարգ դպրոցում ուսուցանվում է եզդիերեն: Մյուս առարկաների ուսուցումն իրականացվում է եզդիերեն դասագրքերով: Շիրակի մարզում գործում է հունական համայնքի կիրակնօրյա դպրոց, հունարենի ուսուցումը կազմակերպվում է շաբաթական երեք անգամ՝ շաբաթ, կիրակի և չորեքշաբթի օրերին:

63. Արմավիրի մարզի Վաղարշապատի N 9, Արմավիրի N 5, Արմավիրի N 6 հիմնական, Մրգաշատի N 2 և Գայի միջնակարգ դպրոցներում գործում են ռուսերենի խորացված ուսուցմամբ դասարաններ: Այդ դպրոցներն ունեն հատուկ ծրագիր, դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ:

64. Արմավիրի մարզի 21 հանրակրթական դպրոցներում ուսուցանվում է եզդիերեն: Եզդիերենի դասավանդման հետ կապված առկա են հետևյալ խնդիրները՝

- 1) մի քանի դպրոցում համատեղ դասավանդելու ժամանակահատվածի անհամապատասխանությունը,
- 2) ծրագրի բացակայությունը,
- 3) նույն խմբում տարբեր տարիքային երեխաների ընդգրկումը,
- 4) ազգությամբ եզդի երեխաների չհաճախելը խմբակի պարապմունքներին:

Արագածոտնի մարզի ազգային փոքրամասնությունների դպրոցներում հիմնականում դասավանդում են միջնակարգ կրթությամբ ուսուցիչներ: Բարձրագույն կրթություն ունեն երկու ուսուցիչ: Եզդիերեն և քրդերեն դասավանդող ուսուցիչները չունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, որովհետև ՀՀ բուհերում չկան համապատասխան ֆակուլտետներ:

65. 2017-2018 ուսումնական տարում ՀՀ կառավարության որոշմամբ լուծարվել է ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձորի հիմնական դպրոցը՝ աշակերտների թվակազմի անբավարար լինելու պատճառով: Դպրոցահասակ 4 աշակերտի ուսուցման գործընթացը կազմակերպվում է մոտակա Վերին Բազմաբերդի հիմնական դպրոցում:

Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կայացել են «Մայրենի լեզվի միջազգային օրվան» նվիրված միջոցառումներ: Մարզի այն դպրոցներում, որտեղ գործում են ազգային փոքրամասնությունների լեզուների խմբակներ, միջոցառումներ են կազմակերպվել նաև փոքրամասնությունների լեզուներով (եզդիերեն, ասորերեն), որի ընթացքում ելույթ են ունեցել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: **Աղյուսակ 1-2:**

66. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ գեկույցի 33-րդ, ՀՀ 4-րդ գեկույցի 96-րդ և այլ կետերը:

67. ՀՀ 4-րդ գեկույցի N 3 հավելվածում նշված բոլոր դպրոցները (բացի Արագածոտնի մարզի Օթևան համայնքի հիմնական դպրոցից) ընդգրկված են Հայաստանի կրթական ցանցում (ՀԿՑ) և ապահովված են շուրջօրյա անխափան ինտերնետային կապով: ՀԿՑ-ում բոլոր դպրոցներին տրամադրվել է տարածք և ցուցաբերվում է աջակցություն՝ դպրոցական կայքի ստեղծման և շահագործման նպատակով: Հայաստանի դպրոցների կայքերի հղումների ցանկերն ըստ մարզերի և ըստ կրթության կազմակերպման ձևի տեղադրված են «Դպրոցական կայքեր»-ում (<https://schoolsite.am/>): ՀԿՑ-ի սպասարկումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներով:

68. ՀՀ մարզերում հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվել են ազգությամբ եզդի աշակերտների, մասնավորապես, եզդի աղջիկների՝ հանրակրթությունից դուրս մնալու խնդիրների վերաբերյալ սեմինարներ և քննարկումներ, որոնց մասնակցել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ներկայացուցիչները:

69. «Ասորերենի, քրդերենի և եզդիերենի հրատարակված դասագրքերի և առարկայական ծրագրերի էլեկտրոնային տարբերակները\* տեղադրվել են ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող «Հայկական կրթական միջավայր» պորտալի (<http://www.armedu.am>) «Պաշարների շտեմարան» ենթակայքում (<http://lib.armedu.am>): Տե՛ս նաև նախորդ՝ ՀՀ 4-րդ գեկույցի 106-րդ կետը:

70. Արմավիրի Նոր Արտագեսի միջնակարգ դպրոցի ասորական խմբակն ապահովված է պետպատվերով տպագրվող տարրական դասարանների համար նախատեսված ասորերեն դասագրքերով: 2019-2020 ուսումնական տարվա համար ևս պատվիրվել են նոր դասագրքեր:

71. Արարատի մարզում պարբերաբար կազմակերպվում է ռուսաց լեզվի լավագույն ուսուցչի մրցույթ: Մարզի «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթում 2016-2017 ուսումնական տարում լավագույն ուսուցիչ է ճանաչվել Մասիս քաղաքի N 2 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Անժելա Մինասյանը, որը ՀՀ ԿԳ նախարարության կողմից 2017-2018 ուստարում ընդգրկվել է տարվա լավագույն ուսուցիչ մրցույթի Արարատի մարզային գնահատող հանձնաժողովի կազմում:

Հայաստանում ԱՊՀ մասնակից պետությունների հումանիտար համագործակցության Ռուսաստանի Դաշնության Երևանում մշակույթի և գիտության Ռուսաստանյան կենտրոնի և ՀՀ-ում ռուսաստանյան կազմակերպությունների աջակցությամբ կազմակերպվում են ռուսաց լեզվի ուսուցիչների համատեղ վերապատրաստման դասընթացներ, սեմինար-խորհրդակցություններ, ռուսաց լեզվի տարվա «Լավագույն ուսուցիչ» մրցույթներ:

Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում 2018 թվականի դրությամբ վերապատրաստվել են ռուսերենով ուսուցմամբ դասարանների բոլոր մանկավարժները:

ՀՀ Շիրակի մարզի Ազատան համայնքում բնակվող եզդի երեխաների համար համայնքի միջնակարգ դպրոցում ուսուցանվում է եզդիերեն: Դասավանդող ուսուցիչն աշխատում է շաբաթական 6 դասաժամ ծանրաբեռնվածությամբ և վարձատրվում սահմանված դրույքաչափով: Մարզպետարանի կողմից միջնորդություն էր ներկայացվել համայնքի ղեկավարին՝ համայնքի միջոցների հաշվին ուսուցչին ֆինանսական օժանդակություն



ցուցաբերելու համար, որի արդյունքում սկսած 2011-2012 ուսումնական տարվանից մինչ այժմ եզդիերեն դասավանդող ուսուցիչը լրացուցիչ վարձատրվում է համայնքային բյուջեից՝ ստանալով լրացուցիչ ֆինանսական օգնություն:

72. Սյունիք - 2016 և 2017 թվականներին 2-ական դիմորդներ է ընդունվել ՌԴ բուհեր՝ ավարտելուց հետո Հայաստան վերադառնալու պայմանով:

73. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 110-րդ կետը:

74. Արարատի մարզի Վերին Դվինի և Դիմիտրովի հանրակրթական դպրոցները, ինչպես հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները, ստանում են պետական ֆինանսավորում աշակերտ-թիվ ֆինանսավորման բանաձևի համաձայն:

Շիրակի մարզում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում եղած ուսումնաօժանդակ և վարչական հաստիքների որոշակի քանակի օպտիմալացումը ոչ մի կերպ չի վտանգել փոքրամասնությունների լեզուներով կրթությանը:

75. Արարատի Վերին Դվինի միջնակարգ դպրոցում 1995 թվականին ստեղծվել է և մինչ այսօր գործում է հայ-ռուս-ասորական «Արբելա» գիտամշակութային կենտրոնը: Դպրոցում անցկացվել և անցկացվում են «Իմ մայրենի լեզուն», «Մեր լեզուն մեր գոյության գրավականն է» (ասորերենի օրը՝ ապրիլի 21-ին) խորագրերով միջոցառումներ: Նշվում է նաև ասորական Նոր տարին՝ Հաբ-Նիսան, որը 2008 թվականից ապրիլի 1-ից հաստատվել է և կազմակերպվում է ՀՀ կառավարության կողմից:

Կրթության և գիտության նախարարի 2018 թվականի օգոստոսի 1-ի N 860-Ա/2 հրամանով հաստատվել է «Ազգային երգ ու պար» առարկայի ծրագիրը՝ ՀՀ Արարատի մարզի Վերին Դվինի միջնակարգ դպրոցում ներդնելու համար:

Շիրակի մարզում «Հյուսիսային մարզերի եզդիներ միավորում» հասարակական կազմակերպությունը զբաղվում է մարզի եզդիների կրթական, մշակութային, սոցիալական և իրավունքների պաշտպանության հարցերով, կազմակերպում է ազգային և կրոնական տոներին նվիրված տարաբնույթ ազգագրական միջոցառումներ: Ազատան համայնքում բնակվող ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի երեխաների համար համայնքի միջնակարգ դպրոցում ուսուցանվում է եզդիերեն:

Լոռու մարզում ազգային փոքրամասնությունները բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի և ավանդույթների պահպանման համար:

Մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների կրթական, մշակութային հարցերով զբաղվում են նրանց կողմից ձևավորված 5 հասարակական կազմակերպություններ՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ակմի», ազգային մշակույթի, կրթական և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա» և ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական հիմնախնդիրներով զբաղվող «Օբշչեստվո Ռոսիի» ՀԿ-ները:

Մշտապես խրախուսվում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

76. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 114-րդ կետը և ՀՀ 3-րդ զեկույցի 115-րդ կետերը:

77. 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից շրջաբերականով առաջարկվել է մեծաթիվ ազգային փոքրամասնություններ ունեցող համայնքների ղեկավարներին՝ սահմանված կարգով իրականացնել և ապահովել դպրոց չհաճախող երեխաների ընդգրկումը հանրակրթական ուսումնական հաստատություններում:

78. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 118-119-րդ կետերը:

79. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 120-րդ կետը:

80. Միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևաչափերի համաձայն՝ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով: Հանրապետության բոլոր նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հաստատություններում ռուսերենի ուսուցումը, իբրև օտար լեզու, իրականացվում է որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս:

81. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 122-րդ կետը:

82. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական 28 պետական ուսումնական հաստատություններում սովորում է ազգությամբ եզդի 86 ուսանող:

83. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 123-րդ կետը:

84. Յուրաքանչյուր տարի, ազգային փոքրամասնության համայնքի ղեկավարի միջնորդագրի հիման վրա, համապատասխան մասնագիտությունների մրցութային քննություններից դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու հարցը քննարկվում է ՀՀ բուհերի ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովի նիստում:

Դրական միավորներ ստացած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող դիմորդների համար պահուստային տեղերից հատկացվում են անվճար ուսուցման տեղեր:

85. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 126-րդ կետը:

86. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 127-րդ կետը:

87. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 128-130-րդ կետը:

88. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 131-րդ կետը:

89. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 132-133-րդ կետերը:

## **Հոդված 2. Տնտեսական և հասարակական կյանք**

90. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 180-184-րդ կետերը:

91. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 3-րդ զեկույցի 185-րդ կետը:

92. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 186-րդ կետը:

93. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում խնամվում է ազգային փոքրամասնություններին պատկանող 75 անձ, այդ թվում՝ 29 երեխա:

Նշյալ անձինք տիրապետում են հայերենին և հեշտությամբ հաղորդակցվում են: Առայժմ չի գրանցվել որևէ խնդիր այն առնչությամբ, որ ազգային փոքրամասնության որևէ ներկայացուցիչ խնամքի հաստատություններում ունեցել է հաղորդակցման դժվարություններ լեզվական պատճառներով կամ ծառայություններից պատշաճ օգտվելու հետ կապված խնդիրներ: Բացի այդ, նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում աշխատում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, ովքեր անհրաժեշտության դեպքում կարող են օգնել լուծելու լեզվի հետ կապված խնդիրները:

Ստորև ներկայացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում խնամվող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց, երեխաների, ինչպես նաև աշխատողների վերաբերյալ տեղեկատվություն: **Աղյուսակներ 7-1, 7-2:**

## **Հոդված 3. Լրատվամիջոցներ**

94. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում ընդունվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-153-Ն ՀՀ օրենքը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) կատարված փոփոխությունների համաձայն օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դ. ենթակետով հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության համար պարտավորություն է սահմանվել՝ եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար:

Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից օրենքի վերոնշյալ պարտավորությունը լիարժեք իրականացնելու համար Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին վերապահվել է լիազորություն՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որոշմամբ սահմանվել են հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները:

1) Հանրային հեռուստատեսությամբ՝ շաբաթական առնվազն 30 րոպե,

2) Հանրային ռադիոյով՝ օրական առնվազն 30 րոպե:

95. Հանրային հեռուստատեսությամբ և այլ հեռուստաընկերություններով պարբերաբար հեռարձակվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կամ նախաձեռնությամբ ազգային փոքրամասնությունների մասին վերլուծական, իրավունքների իրազեկման կամ տեղեկատվական հաղորդումներ՝ հիմնականում հայերեն կամ ռուսերեն: Հեռուստալրագրողների խնդրանքով ազգային փոքրամասնությունների միջոցառումները կամ տոնակատարությունները մեկնաբանելիս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները խոսում են իրենց լեզվով: Հանրապետության մարզերում գործող հեռուստաընկերությունները պարբերաբար անդրադառնում են ազգային փոքրամասնությունների կողմից ներկայացվող խնդիրներին:

96. Հայաստանի Հանրային ռադիոն ամեն օր իրականացնում է հեռարձակում ազգային փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես, ասորերեն՝ 15 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, եզդիերեն՝ 30 րոպե, հունարեն՝ 15 րոպե: Աշխատանքային օրերին ռուսախոս ազգային փոքրամասնությունների համար հեռարձակվում է լրատվական-վերլուծական հաղորդում՝ 15 րոպե տևողությամբ:

97. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն ամեն տարի ֆինանսական միջոցներ է հատկացնում ազգային փոքրամասնությունների մամուլի տպագրությանն օժանդակելու համար: «Պետական աջակցություն ոչ պետական մամուլին» բյուջետային ծրագրով 2015-2018 թվականների Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն աջակցություն է ցուցաբերել ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող 13 մամուլի և 1 ամսագրի հրատարակմանը: Պետք է նշել, որ Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեծ մասը շարունակում է տպագրել հայերեն կամ ռուսերեն մամուլ (երկլեզու, իսկ առանձին դեպքերում՝ եռալեզու):

98. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող պարբերական գրական, մշակութային, գիտական և այլ մամուլի հրատարակմանը, այդ թվում՝ եզդիների համայնքի «Էզդիխանա» և «Լալըշ» հայերեն թերթերի, ռուսական համայնքի «Գոլոս Արմենիի», «Նովոյե վրեմյա» թերթերի, վրացական համայնքի «Իվերիա» թերթի, լեհական համայնքի «Պոկա մի ժիվի» թերթի (ռուսերեն, լեհերեն) և «Ջագրոս» քրդերեն թերթերի, հունական համայնքի «Բլիոս» թերթի, ինչպես նաև ասորական համայնքի «Ассирийские новости» և «Ասսիրիյսկիե նովոստի» թերթը՝ ռուսերեն և ասորերեն թերթերի:

2015-2018 թթ. «Ոչ պետական մամուլի հրատարակում» պետական ծրագրի շրջանակներում գրքերի, թերթերի և «Աջակցություն ազգային փոքրամասնություններին» ծրագրով դրամաշնորհ մշակութային միջոցառումներին պետական բյուջեից հատկացված միջոցները: Տես՝ **Աղյուսակ 1-2:**

99. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 166-րդ կետը:

100. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ 2015-2018 թվականներին ազգային փոքրամասնությունների լեզուներով «Ազգային փոքրամասնությունների և այլ գրականության հրատարակում» ծրագրով հրատարակվել է 6 անուն գիրք, այդ թվում՝ Ամարիկե Մարդարի «Կարոտ» վեպը, Ալեքսանդր Պորյադոնիի «Արծաթե թելը» վեպը, Մոսադե Ջամալի «Լեռների ծիածանը» պատմվածքների ժողովածուն, Ն. Նիկոլաիդի և Ա. Խուրշուդյանի «Մակկիլարի» գիրքը, Ամո Շառոյանի «Շանգալի ցավը» արձակ ժողովածուն, Ալիխանե Մամեի «Բանաստեղծությունները»:

2015-2017 թթ. «Գրականության գծով պետական պատվեր» ծրագրի շրջանակներում հրատարակվել է նաև գրականություն՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով: Հրատարակվող գրականության ցանկը բերվում է ստորև ներկայացվող աղյուսակներում: **Աղյուսակ 1-3:**

101. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 168-րդ կետը:

102. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ձևավորման սկզբունքը փոխվել է և այժմ Սահմանադրության 197-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից և հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաչառությունը, ինքնուրույնությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը: Օրենքով երաշխավորվում է հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրությունը, արտադրությունը, տարածման իրավունքը: Հեռուստառադիոհաղորդումների գրաքննությունն արգելվում է: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատ ընդունելու հեռուստառադիոհաղորդումներ և լրացուցիչ տեղեկություն՝ ներառյալ արբանյակային, կաբելային (մալուխային) ցանցերով, անվճար կամ վճարովի, ինչպես ապակողավորող միջոցներով, այնպես էլ հեռուստառադիոհեռարձակման բաց ցանցերով: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն իրավասու չէ միջամտելու մասնավոր հեռուստաընկերությունների գործունեությանը:

103. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը ղեկավարվում են օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով և ապահովում են կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, խղճի, մտքի և կրոնի, ինչպես նաև ստեղծագործության ազատությունը:

Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունն օրենքի համաձայն իրենք են մշակում և իրականացնում ծրագրային քաղաքականությունը և օրենքի համաձայն հեռուստառադիոլսարանին պարտավոր են մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը:

#### **Հոդված 4. Դատական մարմիններ. Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ**

104. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ից 6-րդ մասերը սահմանում են՝

- 1) Հայաստանի Հանրապետությունում դատավարության լեզուն հայերենն է.
- 2) բոլոր փաստաթղթերը դատարան են ներկայացվում հայերեն կամ հայերեն պատշաճ թարգմանությամբ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
- 3) յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատավարությանը մասնակցելու իր նախընտրած լեզվով, եթե նա ապահովում է հայերեն պատշաճ թարգմանությունը.
- 4) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են դատավարությանը մասնակցել հայերենով.
- 5) քրեական գործով հայերենին չտիրապետող մեղադրյալին դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով՝ բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը.
- 6) վարչական գործով դատավարության մասնակցին, քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձին, իսկ քրեական գործով՝ տուժողին դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե նա չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն և ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն պետական

միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցելու անհրաժեշտության դեպքում այդ անձը նշանակվում է դատարանի որոշմամբ: Այդ անձին նշանակելու, նրա վարձատրության չափը և կարգը սահմանում է կառավարությունը:

105. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը: ՀՀ քրեական դատավարության 15-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարության մասնակցին (բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի), նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար, իսկ 4-րդ մասը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձինք (բացառությամբ վկայի) դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը քրեական վարույթն իրականացնող մարմինը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում, անկախ հանցանքի կատարման վայրից, քրեական գործերով վարույթ իրականացվում է նշված օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ: Հետևաբար, նույնիսկ դատավարության լեզվին՝ հայերենին տիրապետող ազգային փոքրամասնությանը պատկանող անձին, իր ցանկությամբ, հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճենները կարող են տրամադրվել համապատասխան լեզվով, քանի որ տվյալ պարագայում անհրաժեշտ կլինի ղեկավարվել խարտիայի պահանջներով: Ելնելով այս սկզբունքից՝ դատավարության լեզվին տիրապետող ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք նույնպես կարող են պահանջել, որ հանձնման ենթակա փաստաթղթերն իրենց տրամադրվեն համապատասխան լեզվով վավերացված պատճեններով:

106. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության լեզուն հայերենն է: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ գործին մասնակցող անձին, նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված մասնագետին կամ վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չի տիրապետում հայերենին, և գործին մասնակցող անձն ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

107. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-6-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են՝

«1. Հայաստանի Հանրապետությունում վարչական դատավարության լեզուն հայերենն է:

2. Դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացվում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց:

3. Կողմը, նրա ներկայացուցիչը, կողմի նախաձեռնությամբ նշանակված փորձագետը կամ կողմի միջնորդությամբ հրավիրված վկան իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե կողմն ապահովում է հայերեն թարգմանությունը: Դատավորը, կողմերը, վկաները, փորձագետները, ներկայացուցիչներն իրավունք չունեն ստանձնելու թարգմանչի պարտականություններ, անգամ եթե նրանք տիրապետում են թարգմանության համար անհրաժեշտ լեզվին:

4. Վարչական դատավարության մասնակցին, նրա նախաձեռնությամբ նշանակված փորձագետին, նրա միջնորդությամբ հրավիրված վկային դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե համապատասխան անձը չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն, և նա ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

5. Թարգմանիչն իրավունք ունի հարցեր տալու թարգմանության ճշգրտման համար, ծանոթանալու դատական նիստերի կամ առանձին դատավարական գործողությունների արձանագրությանը և դիտողություններ անելու թարգմանության ճիշտ արձանագրման կապակցությամբ:

6. Թարգմանիչը նախազգուշացվում է ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ դատարանը թարգմանչից ստորագրություն է վերցնում»:

108. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են. «Վարչական վարույթն իրականացվում և վարչական ակտն ընդունվում է հայերենով: Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով: Այդ դեպքում վարչական մարմինը կարող է պահանջել ներկայացնել փաստաթղթերի թարգմանությունները հայերենով»:

109. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով: Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները»:

110. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական ակտն ընդունված վարչական մարմինը վարչական ակտի հասցեատիրոջ գրավոր խնդրանքով նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

Նույն օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են. «Վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարումներ տրվում են Հայաստանի Հանրապետության բյուջեից կամ համապատասխան համայնքի բյուջեից՝ կախված այն հանգամանքից, թե որ վարչական մարմինն է հրավիրել այդ անձանց (պետական, թե տեղական ինքնակառավարման մարմին):

Եթե փորձագետին կամ թարգմանչին հրավիրել է վարչական վարույթի որևէ մասնակից, ապա համապատասխան ծախսերը կրում է այդ մասնակիցը:

Սույն հոդվածով նախատեսված անձանց համապատասխան վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով, իսկ վարչական վարույթի մասնակիցներից որևէ մեկի կողմից հրավիրված լինելու դեպքում՝ հրավիրողի և հրավիրվողի միջև ձեռք բերված պայմանավորվածությամբ սահմանված կարգով և չափով»:

111. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը: Սակայն այդ անձինք պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի»:

112. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ գեկույցի 144-147-րդ կետերը:

### **Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Վերջինիս նպատակն է կարգավորել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանել դրանց հետ կապված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները, ինչպես նաև կանոնակարգել ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպչի րավական հիմքերը:

«Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածը նվիրված է Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից իրենց լեզուն գործածելու ազատությանը: Ներկայումս «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է լրամշակման փուլում, որն ավարտելուց հետո կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ հաստատման, այնուհետև կուղարկվի ՀՀ Ազգային ժողով ընդունման:

113. Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են դիմում ներկայացնել իրենց լեզվով, իսկ պատասխանը նրանց տրվում է պետական լեզվով, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումատուն նշում է, որ ակնկալում է պատասխանն ստանալ իր կողմից նշված լեզվով:

Մարզերում բնակվող ազգային փոքրամասնություն կազմող բնակիչները տիրապետում են հայերենին, ուստի պետական մարմիններին դիմելու խնդիր վերոհիշյալ բնակչությունը չունի:

114. Մարզերում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ունեն լայն հնարավորություններ և իրավունք՝ այդ լեզուներով գրավոր կամ բանավոր հայտեր ներկայացնելու տեղական և մարզային իշխանություններին, սակայն անհրաժեշտ է փաստել, որ փոքրամասնությունների ներկայացուցիչները մեծամասամբ չտիրապետելով իրենց էթնիկ գրավոր լեզվին՝ գերադասում են նշված շրջանակների հետ շփումներում օգտագործել պետական լեզուն: Օրինակ, Լոռու մարզում ազգային փոքրամասնությունների մյուս ներկայացուցիչները, մասնավորապես, հույներն ու եզդիները, անգամ միմյանց հետ հազվադեպ են շփվում իրենց մայրենի լեզվով:

115. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ գեկույցի 150-152-րդ կետերը:

116. Արմավիրի մարզում տվյալ ազգային փոքրամասնությունների լեզվով խոսում են տվյալ փոքրամասնությունների համայնքներում, Լոռու (Ֆիոլետովոյի և Լերմոնտովոյի համայնքներ) և Շիրակի մարզերում օրենքով սահմանված դեպքերում ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ) գործածվում է ռուսերեն լեզուն:

117. Արագածոտնի մարզի ազգային փոքրամասնությունների հավաք բնակավայրերում տեղական ինքնակառավարումն իրականացվում է Ալազյազ խոշորացված համայնքապետարանի և ընտրված ավագանու միջոցով:

Արարատի մարզի Դիմիտրովի և Վերին Դվինի և Լոռու մարզի Ֆիոլետովոյի և Լերմոնտովոյի համայնքներում տեղական ինքնակառավարումն իրականացնում են իրենց ներկայացուցիչները:

Կոտայքի մարզի Արզնի գյուղում համայնքի ղեկավարը և Ավագանու 9 անդամներից 5-ը ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ են (չորս ասորի, մեկ եզդի): Նոր Գեղիում ավագանու 9 անդամներից մեկը եզդի է: Մինչև համայնքների խոշորացումը եզդիները ավագանու անդամ ունեին նաև Զովունիում:

Մարզի ազգային փոքրամասնությունները ներկայացված են նաև ՀՀ Ազգային ժողովում. Կնյազ Հասանով (Աբովյան, քուրդ), Արսեն Միխայլով (Արզնի, ասորի):

ՀՀ մյուս մարզերում ազգային փոքրամասնությունների հավաք բնակավայրեր չկան:

118. Արարատի մարզի Վերին Դվին և Դիմիտրով համայնքների ղեկավարներն ասորի են և ցանկության դեպքում գործածում են իրենց մայրենի լեզուն:

Մյուս մարզերում ազգային փոքրամասնությունների լեզուներով դիմումներ դեռ չեն հասցեագրվել, սակայն հասցեագրվելու դեպքում, ըստ անհրաժեշտության, կպատասխանվեն տվյալ լեզվով:

119. Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետը և Նալբանդյանի և Զարթոնքի համայնքապետի տեղակալներն ազգությամբ եզդի են: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են աշխատում նաև Երասխահունի և Նոր Արտագերսի համայնքապետարաններում և դպրոցներում:

Շիրակի մարզում պետական պաշտոնատար անձինք բավարար չափով տիրապետում են ռուսերենին, կան նաև եզդիերենին, հունարենին որոշակի չափով տիրապետողներ: Փոքրամասնությունների լեզուներին տիրապետող աշխատողներ կան նաև տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքային և գյուղական ավագանիներում:

120. Արագածոտնի մարզի ազգային կազմով գյուղական համայնքներում ավագանու անդամների և համայնքի ղեկավարի պաշտոններում ընդգրկված են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Արարատի մարզի Վերին Դվին համայնքապետարանի 12 աշխատողներից 9-ը, ավագանու 7 անդամներից 6-ը ազգությամբ ասորի են: Դիմիտրովում՝ համայնքապետարանի 12 աշխատողներից 5-ը ասորի են՝ ներառյալ Դիմիտրովի մանկապարտեզի տնօրենը:

Ազգությամբ ռուս և եզդի ազգային փոքրամասնությունների 3 ներկայացուցիչներ ևս ընդգրկված են գյուղական համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններում:

Գեղարքունիքի մարզի Սևան և Մեմյոնովկա համայնքների ավագանիների կազմերում ընդգրկված է մեկական քուրդ ներկայացուցիչ:

Շիրակի մարզում պետական պաշտոնատար անձինք բավարար չափով տիրապետում են ռուսերենին, կան նաև եզդիերենին, հունարենին որոշակի չափով տիրապետողներ: Փոքրամասնությունների լեզուներին տիրապետող աշխատողներ կան նաև տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքային և գյուղական ավագանիներում:

121. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 158-159-րդ կետերը:

## **Հոդված 5. Մշակութային գործունեություն և հնարավորություններ**

122. Տե՛ս նախորդ՝ ՀՀ 4-րդ զեկույցի 171-րդ կետը:

123. ՀՀ նախագահի աշխատակազմին առընթեր ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունները համակարգող խորհրդի 2000 թ. հոկտեմբերի 5-ի առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից ՀՀ ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով տարեկան 10 մլն դրամ է հատկացվել խորհրդի անդամ հանդիսացող 11 ազգային համայնքները ներկայացնող կազմակերպություններին:

2012 թ-ից խորհրդի առաջարկությամբ և համապատասխան հիմնավորմամբ ՀՀ կառավարությունը կրկնապատկել է ազգային փոքրամասնություններին հատկացվող գումարը՝ հասցնելով այն 20 մլն դրամի:

Այդ գումարի չափը ներառված է նաև 2019 թ. պետական բյուջեում:

Գումարի բաշխման կարգը յուրաքանչյուր տարի քննարկվել և հաստատվել է խորհրդի նիստում՝ անդամների քվեարկության արդյունքում՝ ձայների մեծամասնության սկզբունքով:

